ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 ապրիլի 2026 թվականի N 133-Ա

«ԱԶՆԻՎ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՈՐՆԻՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՐՍԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 1-ի N 2 աշխատանքային պայմանագրի 2.1.1 կետի 22-րդ ենթակետը և նույն կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ա. Սարգսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2026 թվականի ապրիլի 2-ից լուծել «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող (այսուհետ՝ Համակարգող) Արսեն Սարգսյանի հետ 2024 թվականի փետրվարի 1-ին կնքված N 2 աշխատանքային պայմանագիրը:

2. «Ազնիվ Բալասանյանի անվան Կորնիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության Համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Նարա Գրիգորյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության Համակարգողի պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2026-04-01 15:20:17 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. ապրիլի 1